VIVA

ք. Երեւան, 17 հուլիսի, 2025թ.
Ref. No MH/L250397/1.0/AA

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության
գլխավոր քարտուղար՝ Տիգրան Իգիթյանին

«Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների պայմաններում փոփոխությունների մասին

Հարգելի՛ գործընկեր,

Տեղեկացնում ենք, որ 2025 թվականի փետրվարի 20-ից սկսած Viva-ի մի շարք արխիվացված կորպորատիվ սակագնային պլանների տրամադրման պայմաններում տեղի են ունեցել փոփոխություններ: Մասնավորապես, արխիվացված «Գործընկեր Ա», «Գործընկեր Բ», «Գործընկեր Ե», «Մաքս գործընկեր 3», «Մեգա», «Մեգա հատուկ», «Մեկ թիմ» և «Մեր գործընկեր 2» կորպորատիվ սակագնային պլանների ամսավճարը 2025 թվականի փետրվարի 20-ից կազմում է 500 ՀՀ դրամ: Փոփոխության համաձայն, «ՀՀ ԱՆ Քրեակատարողական» ծառայությանը տրամադրվող «Մաքս Գործընկեր 3» սակագնային պլանի գինը ևս՝ 2025 թվականի փետրվարի 20-ից սկսած կազմել է 500 ՀՀ դրամ:

Նշված ամսաթվից սկսած՝ վերը թվարկված սակագնային պլաններից օգտվելու համար նաև անհրաժեշտ կլինի ակտիվացնել Viva-ի կողմից առաջարկվող Կորպորատիվ փաթեթներից որևէ մեկը: Այն բաժանորդների համար, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն ունեցել ակտիվացված կորպորատիվ փաթեթ, լրացուցիչ ակտիվացել է նվազագույնը 600 դրամ ամսավճարով գործող «Կորպորատիվ Mini» փաթեթը: «Կորպորատիվ Mini» փաթեթի շրջանակում բաժանորդներին տրամադրվում է 200 րոպե խոսելաժամանակ դեպի ՀՀ բջջային ցանցեր, 5 ԳԲ ինտերնետ և 200 SMS ուղարկելու հնարավորություն: Փաթեթով տրամադրվող խոսելաժամանակը սպառելուց հետո տրամադրվում է 10 000 րոպե՝ դեպի Viva ցանց, իսկ 5 ԳԲ ինտերնետ փաթեթը սպառելու դեպքում, ընթացիկ հաշվի սահմանաչափից և երաշխիքային կանխավճարից կախված, ավտոմատ ակտիվանում է օրական 500 ՄԲ ինտերնետ փաթեթ՝ 100 դրամ/օր սակագնով: Փաթեթները սպառելուց հետո հասանելի ծառայությունների սակագներում ևս 2025 թվականի փետրվարի 20-ից տեղի են ունեցել փոփոխություններ, որոնց կարելի է ծանոթանալ ստորև.

Փաթեթի ներառումները սպառելուց հետո օգտագործվող ծառայությունների սակագներ	
Զանգեր	
Դեպի Viva	15 դրամ/րոպե*
Դեպի ՀՀ այլ բջջային ցանցեր	35 դրամ/րոպե
Դեպի ՀՀ ֆիքսված ցանցեր	35 դրամ/րոպե
Դեպի Ռուսաստան	79 դրամ/րոպե
SMS	
SMS՝ խմբի ներսում	5 դրամ/ SMS
SMS՝ դեպի ՀՀ բջջային ուղղություններ	20 դրամ/ SMS
SMS՝ միջազգային ուղղություններով	20 դրամ/ SMS

* 10 000 ներցանցային րոպեն սպառելուց հետո՝ 15 դրամ/րոպե

Հարգանքով

Արմեն Ավետիսյան
Գլխավոր տնօրեն՝

Կատարող՝ Անի Արշակյան (հեռ. համար՝ 68680)

«Վիվա Արմենիա» ՓԲԸ
Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ
Հեռ.՝ +37460771111
www.viva.am, info@viva.am